ՀՀ ԿԳՄՄՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՌՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեման՝** «Մոսկվայի և Կարսի պայմանագրերը թեման և դասավանդման մեթոդիկան»

**Մասնակցի անուն, ազգանունը՝** Գրիգորյան Կամո

**Դպրոցը՝** Այգավան գյուղի Գառնիկ Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոց

**Դասավանդած առարկան՝** Պատմություն

Արարատ 2022թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3
Գլուխ 1 Մոսկվայի և Կարսի պայմանագրերը թեման և դասավանդման մեթոդիկան..... 4
ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ .....**Error! Bookmark not defined.**
ԵԶՐԱՐԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 17
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 18

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը՝** Մեր օրերում նույնպես կանգնեցինք նման հարցի առաջ երբ Ռուսաստանը, Հայաստանին ստիպեց 44 օրյա պատերազմում հանձնել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին: Հայաստանի սահմանների ճակատագիրը նախ որոշվեց 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության ու ՌՍՖՍՀ-ի միջև կնքված « բարեկամության ու եղբայրության» մասին պայմանագրով:Պայմանագրի 1-ին հոդվածը արդեն ջնջում է առանց այդ էլ տերությունների կողմից չվավերացված Սևրի պայմանագիրը (Հայաստանը վավերացրել էր) և գծում Հայաստանի հետ ներկայիս սահմանները:

«Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը սկզբունքորեն համաձայնվում է չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտեր, եթե Պայմանավորվող կողմերից մյուսին ուժով են հարկադրում ընդունել այդպիսիք: Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարությունը համաձայնվում է չճանաչել Թուրքիային վերաբերվող և այսօր Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ներկայացնող նրա ազգային կառավարության կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ:

**Հետազոտության նպատակը՝**

- Խթանել աշակերնտերի հայրենասիրության զգացումը
- Կատարելագործել Մոսկվայի և Կարսի թեմայի մասին գիտելիքները:

**Հետազոտության խնդիրները՝**

- Վերլուծել Հայաստանի, Ադրբեջանի, Թուրք-Ռուսական հարաբերությունները:
- Գնահատել իրավիճակը Մոսկվայում և Կարսում ինչպես նաև կատարված իրադրությունները:

## Գլուխ 1 Մոսկվայի և Կարսի պայմանագրերը թեման և դասավանդման մեթոդիկան

1921թ. փետրվարի 26-ին Մոսկվայում բացվեց ռուս-թուրքական կոնֆերանսը: Իսկական բանակցությունները, բպայմանագրի հիմնական սկզբունքների որոշումը տեղի են ունեցել հենց այդ օրերին, բանակցությունների նախօրյակին թուրքական պատվիրակությանն ընդունել է Վ. Լենինը: Թուրքիան այդ բանակցություններին մաս նակցում էր իր համար խիստ նպաստավոր պայմաններում, երբ Անտանտի տերություններն արդեն բացահայտ պաշտպանում էին նրան և երբ Հայաստանում արդեն ծագել էր փետրվարյան խռովությունը, որի կազմակերպիչները պատ րաստականություն էին հայտնել վերսկսել հարաբերությունները Թուրքիայի հետ՝ Ալեքսանդրապոլի պայմանագրի հիման վրա: «Հայրենիքի փրկության կոմիտեն» այդ քաղաքականությունը վարում էր ռուս-թուրքական բանակցությունների ամբողջ ընթացքում հայտարարելով, որ Մոսկվայի խորհրդաժողովը իրավասու չէ քննության առնելու Հայաստանի խնդիրը: Իսկ քեմալական պատվիրակությունը դեմ էր Խորհրդային Հայաստանի պատվիրակության մասնակցությանը խորհրդաժողովին՝ հիմք ընդունելով «հայրենիքի փրկության կոմիտեի» հայտարարությունը, որ Հայստանում խորհրդային իշխանությունը տապալված է:

Անցնելով առաջ նշենք, որ ռուս-թուրքական պայմանագիրը կնքելուց հետո էլ մարտի 25-ին Ս. Վրացյանը հետևյալ հեռագիրն է ուղարկում Մուստաֆա Քեմալին. «Իմ կառավարությունը Տաճկաստանի և Հայասատանի միջև ազգային նորմալ և բարեկամական հարաբերություններ սկսելու բազա է համարում այն պայմանները, որոնք ձևակերպված են անցյալ տարվա դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնոված հայ-տաճկական դաշնագրի մեջ»: Սա նշանակում է, որ «Հայրենիքի փրկության կոմիտեն» ճանաչում էր, որ Թուրքիայի տիրապետության տակ էին մնալու նրա փաստական տիրապետության տակ գտնվող Ալեքսանդրապոլը և այն հողերը, որոնք, ըստ պայմանագրի, պետք է վերադարձվեին Հայաստանին:

Մոսկվա մեկնած թուրքական պատվիրակությունը հանձնարարություն էր ստացել բանակցությունների մեջ մտնել խորհրդային Ռուսաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, հյուսիսային Կովկասի, Դաղստանի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ քաղաքական, ռազմական պաշտպանական և հարձակողական պայմանագրեր

կնքելու համար: Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը տեղյակ չէր, որ թուրքական պատվիրակությունը լայն լիազորություններով է օժտված, որոնք, ըստ էության, ուղղված էին Խորհրդային Ռուսաստանի դեմ Հայաստանի հետ նոր պայմանագրի կնքումը բացառվում էր, քանի որ քեմալականները Ալեքսանդրապոլում դեկտեմբերի 2-ի պայմանագիրը համարում էին վերջնական:

Չիչերինի և Կարախանի հետ ունեցած հանդիպումներից հետո փետրվարի 22-ի գիշերը պատվիրակությունը հանդիպել է Ստալինի հետ: Ըստ թուրքական աղբյուրների՝ Ստալինի հետ զրույցը տևել է մինչև վաղ առավոտ: «Ստալինը,— գրում է Սալահին, խոսք է տվել, որ Ռուսաստանը կշարունակի օգնել Թուրքիային բացահայտ կամ գաղտնի ձևով և հավաստիացրել է, որ Ռուսաստանը չի բարձրացնի հայկական հարեր» Դրանից հետո թուրքական պատվիրակությունը կրկին հանդիպում է ունեցել Չիչերինի հետ: Վերջինս իբր ակնարկել է, որ Հայաստանի վերաբերյալ թեման պետք է փակվի, և որ բոլոր ընդհարումները պետք է մոռացվեն: 1921թ. հունվարի 2-ին ՌԿ(բ)Կ Կենկոմի բոլոր անդամներին հասցեագրված նամակում անդրադառնալով Խորհրդային Հայաստանի թե տնտեսական և թե քաղաքական ծանր իրավիճակին (Թուրքիայի և Վրաստանի կողմից իրականացվող շրջափակումը, երկաթուղային հաղորդակցության դադարեցումը և այլն), Օրջոնիկիձեն և Կիրովը առաջ են քաշում տեսակետ, որ առանց Վրաստանի խորհրդայնացման հնարավոր չէ ապահովել Հայաստանի անվտանգությունը և խորհրդային կարգերի ամրապնդումը ու նաև ավելացնում, թե ստեղծված պայմաններում թուրքերը հեշտությամբ կարող են իրենց հենակետը՝ ստեղծել Մակու-Նախիջևանյան շրջանում, որտեղ մտադիր են հատուկ խանություն ստեղծել, որի ձեռքին կլինի դեպի Թավրիզ երկաթուղագիծը, ինչը կարող է մեզ կտրել Պարսկաստանից և անդամահատել Հայաստանը[1]:

Նախիջևանի հարցին Օրջոնիկիձեն անդրադարձել է նաև հունվարի 25-ին ադրբեջանական կոմունիստների Բաքվի քաղաքային կոնֆերանսին տված զեկուցման մեջ: Նա Ադրբեջանի և Հայաստանի փոխհարաբերությունները որակել է որպես եղբայրական ու ներկաներին հիշեցրել է Նարիմանովի հայտնի դեկլարացիայի մասին, որով «Զանգեզուրը և Նախիջևանը դառնում էին Խորհրդային

[1] Տես՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 527

Հայաստանի անբաժան մաս»: Այնուհետև ավելացնում է, որ դժբախտաբար այդ հարցը դեռ լուծված չէ և կարևորելով Նախիջևանի աշխարհագրական դիրքը հայտարարում է, որ «Խորհրդային Ադրբեջանը այդ հարցում անպայման շահագրգռված կողմ է և ոչ մի դեպքում չի կարող Արևելքի այդ բանալին հանձնել»' Ստալինը ևս վճռականորեն հայտարարել էր, որ Նախիջևանի մասին խոսք լինել չի կարող: Նախիջևանը կլինի Խորհրդային Հայաստանում: Կարսի հարցում ևս մոտեցումը այսպիսին էր, բայց թե որքան «վճռական» էը Ստալինը Կարսի ե Նախիջևանի մասին իր խոստումներում, կտեսնենք Մոսկվայի կոնֆերանսի որոշման մեջ:

Անկարայի պատվիրակությունը հանձնարարություն էր ստացել Մուստաֆա Քեմալից ամեն կերպ խուսափել հայ-թուրքական տարածքային հարցերը Մոսկվայի խորհրդաժողովում քննարկելուց և ձգտել միայն ռազմաքաղաքական դաշինք կնքել Ռուսաստանի հետ: Մուստաֆա Քեմալը գտնում էր, որ հայ-թուրքական տարածքային հարցը վերջնականապես լուծվել է Ալեքսանդրապոլի պայմանագրում:

Ռուս-թուրքական խորհրդաժողովի նախօրյակին թուրքական պատվիրա կությունը Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը ներկայացրել էր մի պահանջագիր, ըստ որի անհրաժեշտ էր համարում Թուրքիային հատկացնել 100 հազար հրացան, յուրաքանչյուր հրացանին 10 հազար փամփուշտ, լրացուցիչ ևս 20 մլն փամփուշտ 600 գնդացիր իր 100 հազար փամփուշտով, 24 ինքնաթիռ և զենքերի բազմաթիվ այլ տեսակներ:

Խորհրդաժողովում ՌՍՖԽՀ-ն ներկայացնում էին արտգործժողկոմ Գ, Չիչերինը և կենտգործկոմի անդամ Ջելլալեդդին Կորքմասովը: Նախօրյակին Անգորայի գաղտնի խնդրանքով արտգործժողկոմի տեղակալ, հայազգի Լև (Լևոն) Կարախանը հեռացվեց բանակցային գործընթացից և նրա փոխարեն ընդգրկվեց ժամանակին իթթիհաթի հետ համագործակցած, ծնունդով դաղստանցի Ջ. Կորքմասովը Թուրքական պատվիրակությունը ներկայացնում էին նախարարներ Յուսուֆ Քեմալ բեյը, Ռիզա Նուրի բեյը և ՌՍՖԽՀ-ում Թուրքիայի լիազոր դեսպան Ալի Ֆուադ փաշան: Կոնֆերանսի բացման ժամանակ փոխադարձ ելույթներով հանդես եկան պատվիրակությունների ղեկավարները Չիչերինը առաջարկեց բանակցությունների հիմքում դնել 1920 թ. օգոստոսի 24-ի նախաստորագրված ռուս-թուրքական

պայմանագրի նախագիծը միաժամանակ հաշվի առնելով անցած ամիսների՝ իրողություններն ու փոփոխությունները։ Որոշվեց հիմնել երեք հանձնաժողով քաղաքական, իրավական և խմբագրական։ Այսպիսով բացվեց խորհրդաժողովը, որը շոշափում էր հայ ժողովրդի կենսական շահերը առանց նրա պատվիրակության մասնակցության։ Հայ պատմագրության մեջ կա տեսակետ, որ Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին, այլ 18-ին, որը առաջին անգամ հայ պատմագրության մեջ պարզել է Ռ. Ղազանչյանը։ Միջազգայնագետ Յուրի Բարսեղովը ևս հաստատում է, որ Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է մարտի 18-ին։ Որ ռուս թուրքական Մոսկվայի պայմանագիրը մինչև մարտի 18-ը ստորագրված չի եղել, երևում է նաև կոնֆերանսին չմասնակցած Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանի՝ նույն օրը Մ. Աթաբեկյանին հասցեագրած նամակից, որտեղ պայմանագրի ստորագրման մասին որևէ հիշեցում չկա։ Պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հատվածն այնքան աղաղակող էր ու դաժան, որ Ալ. Բեկզադյանը հանդես եկավ հայտարարությամբ՝ իր անհամաձայնությունը հայտնելով և մեղադրելով Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը՝ Կարսը, Արդահանը և Մուրմալուն ապօրինաբար Թուրքիային հանձնելու մեջ, բայց և գիտակցելով, որ դա գործնական որևէ նշանակություն չի ունենա։

Պայմանագիրը բաղկացած է նախաբանից, 16 հոդվածներից և 1 հավելվածից A. B, C մասերով։ Գիտական շրջանառության մեջ է պայմանագրի ռուսերեն տարբերակը։ 1921թ. մարտի 16-ին կնքված «Բարեկամության և եղբայրության» թալանչիական հակահայկական պայմանագրով Թուրքիային անցան ոչ միայն Կարսի մարզը, այլև Սուրմալուի գավառը։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այդ հարցը նույնիսկ չարծարծվեց։ Ի դեպ, թուրք պատմաբանները չեն էլ թաքցրել իրենց գոհունակությունը։ Թուրքերի պահանջով, ինչպես նշվեց, ժողովն իր դռները փակեց հայկական պատվիրակության առջև։ Խորհրդաժողովի որոշումների մասին հայկական պատվիրակությունը իմացավ հետին թվով։

Պայմանագրի գլխավոր հոդվածներից է առաջինը, որն իր մեջ ընդգրկում է 3 բաղադրիչ։ Պայմանավորվող կողմերը համաձայնում են չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր և միջազգային ակտ, որն ուղղված է կողմերից մեկի դեմ և չի ճանաչվել

վերջինիս կողմից: Դժվար չէ նկատել, որ սա առաջին հերթին ուղղված էր Սևրի պայմանագրի դեմ: Այսպիսով, Մոսկվայի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը առաջիններից մեկը պաշտոնապես չճանաչված էր համարում Սևրի: Սևրի դաշնագիրը ընդունելի չէր Ռուսաստանի համար ոչ միայն և ոչ այնքան Հայկական հարցի, որքան նեղուցների և Սև ծովի կարգավիճակի ու ռեժիմի տեսակետից: Երկրորդ պարբերության մեջ ամրագրվում էր, որ «Թուրքիա հասկացության տակ ճանաչվում էին Կ. Պոլսի օսմանյան խորհրդարանի կողմից մշակված և հռչակված 1923թ. հունվարի 28– ի թուրքական Ազգային ուխտի մեջ մտնող տարածքները»: Երրորդ հատվածը ընդհանուր կերպով նշում էր Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը, որը նկարագրված էր՝ հավելվածներում: Նախիջևանի երկրամասի քաղաքական ճակատագրի խնդիրը տրված է պայմանագրի 3-րդ հոդվածում[2]:

Եթե Ալեքսանդրապոլի պայմանագրով նախագծված հայ-թուրքական սահմանագիծը համեմատում ենք Մոսկվայի պայմանագրով ու համապատասխան հավելվածներով նկարագրված սահմանագծի հետ, ապա կարելի է ասել, որ դրանց միջև էական տարբերություն չկա: Եթե Ալեքսանդրապոլի պայմանագրով սահմանագիծը սկսվում էր հարավից և անցնում հյուսիս-արևմուտք, իսկ Մոսկվայի պայմանագրով, հյուսիսից հարավ, որովհետև նախ տրված է թուրք վրացական սահմանի նկարագրությունը, հետո՝ հայ –թուրքական:

Մոսկվայի պայմանագրի երկրորդ հոդվածը վերաբերում է Բաթումի խնդրին: Այն լուծվեց Վրաստանի օգտին՝ չնայած «Ազգային ուխտով Բաթումը մտնում էր թուրքական պահանջների ցանկում: Թերևս կանգ առնենք երրորդ հոդվածի վրա, որն ամբողջությամբ վերաբերում էր Նախիջևանի մարզի կարգավիճակի և սահմա նագծի հարցերի կարգավորմանը: «Նախիջևանի՝ մարզը սույն պայմանագրի 1(C) հավելվածում նշված սահմաններում կկազմի ինքնավար տարածք Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»: Չնայած որ Նախիջևանի մարզը 1920թ. աշնանից ռազմակալված էր Թուրքիայի կողմից, սակայն պայմանագրում չի ասված, թե իր ժամանակավոր պաշտպանության տակ գտնվող Նախիջևանի մարզը Թուրքիան

[2] Տես՝ Արա Պապյան - Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Ասողիկ, Երևան, 2012, էջ 72-78

հանձնում է Ադրբեջանի հովանավորությանը: Սակայն պարբերության վերջամասում ակներև է թուրքերի կողմից թելադրված հրամայական պահանջը, որ Ադրբեջանը այդ խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության: Երրորդ պետություն ասելով, անշուշտ, նկատի էր առնվում Հայաստանը:

Մոսկվայի պայմանագրով Նախիջևանի հանձնումը Ադրբեջանին Հայաստանի համար շոշափելի կորուստ լինելուց բացի, վնասակար էր նաև ռազմավարական տեսակետից: Դրանով փաստորեն Հայաստանի թիկունքում՝ Արաքսի ձախ ափին, ստեղծվում էր թշնամական մի հենակետ, որը կապող օղակ էր դառնում Թուրքիայի և Ադրբեջանի միջև և պոտենցյալ սպառնալիք ստեղծում Զանգեզուրի և Արցախի համար:

Հարկ է փաստել, որ թուրքերի թիրախը ոչ միայն Սուրմալուն էր, այլև Նախիջևանի մարզը՝ ի վնաս Հայաստանի: Պայմանագրի 3-րդ հոդվածում թուրքերը Նախիջևանի հովանավորությունը հանձնելով Ադրբեջանին՝ 1921թ. ապրիլին իրենց զորքերը դուրս բերեցին Նախիջևանի մարզից: Այսպիսով, Մոսկվայի պայմանագրի առաջին երեք հոդվածներով և հավելված 1 (A, B Q-ով որոշվում էր թուրք–անդրկովկասյան սահմանագիծը այդ թվում՝ հստակեցվում էր Բաթումի ու Նախիջևանի կարգավիճակները և սահմանագիծը համապատասխանաբար՝ Վրաստանի ու Թուրքիայի և Հայաստանի ու Նախիջևանի մարզի միջև:

Կոնֆերանսը ավարտվեց, և կողմերից յուրաքանչյուրին թվում էր, թե ինքն է հաղթանակած դուրս եկել կոնֆերանսից: Ռուսներին թվում էր, թե Մոսկվայի պայմանագրով Թուրքիան ամուր կերպով կապվել է իրենց սայլին և ապահովել երկար տարիների բարեկամություն ու համագործակցություն հակաիմպերիալիստական պայքարում: Ցնծում էր նաև Անկարան: Կոնֆերանսից նա ստացել էր ավելին, քան սպասում էր:

Մոսկվայի կոնֆերանսը և կնքված պամանագիրը խորհրդային դիվանագիտության մեջ ավելի ձախողված էր համարվում, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Մոսկվայի պայմանագրի կնքահայրը Ստալինն էր: Վ. Լենինի հանձնարարությամբ ստանձնելով իրավարարի դեր և փաստորեն մեկուսացնելով Գ. Չիչերինին՝ ի Ստալինը թուրքական պատվիրակության հետ անդրկովկասյան հանդիպումներում լուծում էր բոլոր վիճահարույց հարցերը հիմնականում

թուրքանպաստ դիրքերից և այնուհետև հանձնարարում Գ. Չիչերինին ստորագրել ձեռք բերված համաձայնությունները: Ստալինի ոչ հայանպաստ գործունեությունը այնքան ակնհայտ էր, այնքան անթաքույց, որ թուրք պատվիրակները հասկացել էին առաջին իսկ հանդիպումից և ամեն անգամ դիմում էին նրա օգնությանը՝ հենց որ Հայաստանին առնչվող հարցերում դժվարություն էր ծագում: Ի. Ստալինը թուրքերին ընդառաջեց շատ հարցերում, այդ թվում Նախիջևանի խնդրում՝ համաձայնելով, որ այն լուծվի Շահթախթինսկու հետ բանակցություններում քաջ գիտակցելով, որ այդ դեպքում Հայաստանի մասին խոսք լինել չի կարող: Թեև Մոսկվայի կոնֆերանսից առաջ Նախիջևանի երկրամասը իրավական առումով դեռևս չէր դադադել Հայաստանի մաս լինելուց, բայց և այնպես կոնֆերանսում Նախիջևանի երկրամասի պատկանելիության հարցը լուծելիս Հայաստանի անունն անգամ չշոշափվեց: Նախիջևանի երկրամասի պատկանելիության շուրջ թուրքական պատվիրակության հետ Շահթախթինսկու վարած բանակցությունների բովանդակությունը անորոշ է, թանձր խավարի մեջ: Այդ մասին արևէ հիշատակություն չկա ոչ թուրք, ոչ ադրբեջանցի հեղինակների մոտ: Նույնիսկ հայտնի չէ, թե այդ բանակցություններում քննարկվել է Նախիջևանը Ռուսաստանի հովանավորությանը հանձնելու Չիչերինի առաջարկը, թե՝ ոչ: Հայտնի չէ նաև, թե Նախիջևանը Ադրբեջանի հովանավորությանը հանձնելու վերաբերյալ առաջին թուրք-ադրբեջանական համաձայնությունը կայացել էր Բաքվում Ադրբեջանի ղեկավարության հետ պատվիրակների հանդիպումների շրջանակում, թե Մոսկվայում թուրքերի հետ Շահթախթինսկու բանակցություններում: Մի բան անտարակույս է. Նախիջևանի հովանավորությանը երրորդ պետության չփոխանցելու մասին Ադրբեջանի վրա դրված պարտավորությունը Շահթախթինսկու մտքի արգասիքն էր: Նման հետևության համար հիմք կարող են ծառայել, թե Ադրհեղկոմի դեկլարացիայի նկատմամբ նրա վերաբերմունքը, թե Օրջոնիկիձեին հասցեագրած նամակը և թե ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած զեկուցագիրը:

Մոսկվայի պայմանագիրը քեմալական Թուրքիայի մեծագույն դիվանագիտական հաղթանակն էր: Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության էջերում հազիվ թե գտնվի նախադեպը, երբ պարտված ու ջախջախված երկրում նոր կազմավորված և իր գոյության համար

օրհասական կռիվներ մղող մի կառավարություն իր կամքը թելադրի այն պետությանը, որից օգնություն և աջակցություն էր ակնկալում: Թվում էր, թե ձեռքերը պարզելուց հետո և օգնություն խնդրելուց զատ թուրքերը ուրիշ բան չպետք է անեին: Բայց ոչ, Մոսկվա ժամանած անատոլիական Թուրքիայի մի խումբ դիվանագետներ տեսնում են, թե ինչ պատրաստակամությամբ են խորհրդային բոլշևիկյան ղեկավարները զիջում իրենց դիրքերը, բանակցություններում արհեստական ճգնաժամեր ու լարվածություն են առաջացնում: Շատ թե քիչ կարևորություն ներկայացնող բոլոր հարցերն ի վերջո լուծվում են թուրքերի օգտին: Նույնիսկ Բաթումում թուրքերն այնքան չէին ստացել, որքան այստեղ:

Մոսկվայի խորհրդաժողովը և կնքված պայմանագիրը խորհրդային դիվանագիտության ամենախայտառակ, ամենանվաստացուցիչ ու ձախողված դրվագներից է: Դա դավադիր գործարք էր Հայաստանի և Վրաստանի թիկունքում, ավելի խայտառակ, քան նույնիսկ Մյունխենյան գործարքն էր: Մոսկվայի կոնֆերանսում միայն մեկ զոհ կար: Դա Հայաստանն էր, որի փաստական բաժանումը Թուրքիան և Ռուսաստանը ավարտին հասցրեցին և պայմանագրային բնույթ հաղորդեցին[3]:

Մոսկվայի պայմանագրին ուժ տալու, միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցնելու նպատակով ձևակերպվեց 15-րդ հոդվածը, որը պարտավորեցնում էր Ռուսաստանին քայլեր ձեռնարկելու, որպեսզի Անդրկովկասյան հանրապետությունները իրավականորեն ճանաչեն Մոսկվայի պայմանագրի սահմաններն ու պայմանները: Դրա համար անհրաժեշտ էր նույնաբնույթ պայմանագիր կնքել Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետությունների միջև: Մոսկվայի պայմանագրի
ստորագրումից հետո Քեմալը հայտարարեց, որ «Անդրկովկասյան հանրապետությունների հետ պայմանագրի կնքման հարցը մեծամասամբ ներկայացնում է սովորական ձևականություն, քանզի Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանը պարտավորվում էր իր բոլոր ուժերն ու ազդեցությունը գործադրել Անդրկովկասի հանրապետությունների վրա Թուրքիայի հետ պայմանագիր կնքելու համար»

[3] Տես՝ ԱՄՆ Սենատի թիվ 245 բանաձևը (3 հունիսի, 1924 թ.) միանշանակորեն ամրագրել է, որ Թուրքիան և Ռուսաստանը միասնաբար են գործել Հայաստանի կործանման ուղղությամբ: (Turkey joined with Soviet Russia in the destruction of the Armenian State, brutally murdered hundreds of thousands of Armenians ... Senate Resolution, 245, June 3, 1924. The Armenian Review, vol. 30, No. 3-119, 1977, p. 286)

Նախատեսվում էր, որ առանց հապաղելու թուրք-անդրկովկասյան կոնֆերանս կհրավիրվի և համապատասխան պայմանագիր կկնքվի նրանց միջև: Մոսկվայի պայմանագրի կնքումից մի քանի օր անց՝ մարտի 24-ին, Գ. Չիչերինը նամակով դիմում է ՌԿ(բ)Կ Կենկոմին հետևյալ բովանդակությամբ. «Օրերս թուրքական պատվի րակությունը Թիֆլիսով մեկնում է տուն: Այնտեղ պետք է պայմանագրեր ստորագրվեն անդրկովկսյան հանրապետությունների հետ: Այստեղ՝ Մոսկվայում թուրքական պատվիրակությունը կտրականապես մերժեց մեր առաջարկը կովկասյան պատվիրակությունների հետ ընդհանուր կոնֆերանս գումարելու և այդ հանրա պետությունների հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ: Ակնհայտ է, որ թուրքերը ցանկանում են Թիֆլիսում մեր անմիջական ազդեցությունից դուրս, հասնելու լրացուցիչ արդյունքների ինչ-որ բան կորզելու»: Դրա համար նա առաջարկում էր Թիֆլիս ուղարկել կովկասյան գործերին քաջատեղյակ ներկայացուցիչ, որը կնվիրվի այդ աշխատանքներին: Նա այդպիսի թեկնածուն համարում էր Բ. Լեգրանին կամ Լ. Ստարկին:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն ապրիլի 3-ին թիվ 8 նիստում հավանություն տվեց և հաստատեց Գ. Չիչերինի առարկությունը: Այս որոշումից մեկ օր առաջ՝ ապրիլի 2-ին, արտգործժողկոմ Ակ. Բեկզադյանը Գ. Չիչերինի գիտությամբ Մոկվայից հեռագիր է ուղարկում Բաքու Ադրբեջանի արտգործժողկոմ Մ. Հուսեյնովին, Մ. Օրախելաշվիլուն, պատճենը՝ Շահվերդյանին Հեռագրում նա այն միտքն է հայտնում, որ առաջիկայում Թուրքիայի նախապատրաստվելիք խորհրդաժողովում անհրաժեշտ է, որ Անդրկովկասի՝ երեք հանրապետությունները նախապես պայմանավորվեն և մշակեն ընդհանուր ուղեգիծ - Սակայն գալով Անդրկովկաս (Բաքու և Թիֆլիս): Քեմալ բեյը հայտարարեց, որ ինքը լիազորություն չունի Հայաստանի հետ պայմաագիր կնքելու և որ նրա հետ արդեն  կնքվել է պայմանագիր: Նա նկատի ուներ Ալեքսանդրապոլի պայամանգիրը: Պայմանագիր, որը չի ճանաչվել և չի վավերացվել անգամ Թուրքիայի կողմից: Անդրկովկասյան մյուս երկու հանրապետությունները, Մոսկվայի հանձնարա րականով համերաշխություն ցուցաբերելով, հայտարարեցին, որ եթե նման պայմանագիր չի կնքվելու Հայսատանի հետ, ապա իրենք համաձայն չեն պայմանագիր կնքել Թուրքիայի հետ:

Թուրքերի մարտավարությունը այն էր, որ անդրկովկասյան հանրապե տություններից առանձին բանակցությունների միջոցով ուզում էին ինչ-որ բան կորզել, եթե իհարկե ինչ-որ բան մնացել էր կորզելու: Չիչերինը ճիշտ էր կռահել, որ թուրքերի հետ բանակցությունների ժամանակ հնարավոր էր Ադրբեջանի կողմից «անցանկալի թեքում» դեպի Թուրքիա: Դրա համար էլ նա անհրաժեշտ էր գտնում, որ անդրկովկասյան հանրապետությունների՝ Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերը նախապես արժանանան ՈՍՖԽՀ կառավարության հավանությանը :

Թուրք-անդրկովկասյան հարաբերություններում Գ. Չիչերինին ամենից ավելի անհանգստացնում էին թուրք-ադրբեջանական առանձնահատուկ հարաբերություն ները: Ապրիլի 12-ին նա հեռագիր է ուղարկում Ադրբեջանի արտգործկոմիսար Մ. Հուսեյնովին հրահանգելով, որ անթույլատրելի է Թուրքիայի միջամտությունը կովկասյան հանրապետությունների ներքին գործերին: Նախիջևանի խնդրում Գ. Չիչերինը խորհուրդ էր տալիս, որ Հայաստանը և Ադրբեջանը լինեն համախորհուրդ և Երևանի գավառի՝ հարավում գոյացած եռանկյունի հողակտորի հարցը լուծեն Հայաստանի օգտին[4]:

Կարսի պայմանագիրը գրեթե նույնությամբ կրկնում է 1921 թ-ի մարտի 16-ի Մոսկվայի խորհրդա-թուրքական պայմանագրի դրույթները: Անդրկովկասի խորհրդային հանրապետություններին հնարավորություն չէին տվել մասնակցելու բանակցություններին, որովհետև նրանք Թուրքիայի հետ կնքելու էին առանձին պայմանագրեր: Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով՝ Ռուսաստանը պարտավորվում էր անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ քայլեր ձեռնարկել, որպեսզի նրանց և Թուրքիայի միջև կնքվելիք պայմանագրերում անպատճառ ճանաչվեն Մոսկվայի պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերում են առանձին հանրապետություններին: Պայմանագրի ստորագրումից առաջ հրավիրված Կարսի խորհրդաժողովի նպատակը Թուրքիայի և Անդրկովկասի հանրապետությունների միջև հարաբերությունների կարգավորումն էր: ՀԽՍՀ-ից խորհրդաժողովին մասնակցում էին Ասքանազ Մռավյանը (արտաքին գործերի ժողկոմ, պատվիրակության նախագահ), Պողոս Մակինցյանը (ներքին գործերի ժողկոմ), ՎԽՍՀ-ից՝ Շալվա Էլիավան (ռազմական և ծովային գործերի ժողկոմ),

[4] Տես՝ 11-րդ դասարանի դասագրքում՝ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Պ. ՉՈԲԱՆՅԱՆ, Ա. ՍԻՄՈՆՅԱՆ, Ա. ՆԱՀԱՐՅԱՆ, Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, «Հայոց պատմություն»,Զանգակ Երևան 2021թ.

Ալեքսանդր Սվանիձեն (արտաքին գործերի և ֆինանսների ժողկոմ), Ադրբեջանական ԽՍՀ-ից՝ Բեհբուդ Շահթախթինսկին (պետական վերահսկողության ժողկոմ, պատվիրակության նախագահ), և ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Յակով Գանեցկին: Թուրքական կողմը ներկայացնում էին Քյազիմ Կարաբեքիր փաշան (Արևելյան ռազմաճակատի հրամանատար, պատվիրակության նախագահ), Վելի բեյը, Մուխթար բեյը, Մեմդուհ Շևքեթ բեյը (Ադրբեջանում Թուրքիայի լիազոր ներկայացուցիչ):

Խորհրդաժողովի սկզբին Կարաբեքիր փաշան առաջարկեց պայմանագիր կնքել Անդրկովկասի հանրապետությունների հետ առանձին-առանձին, որը կտրականապես մերժեցին հանրապետությունների պատվիրակները՝ պնդելով ընդհանուր պայմանագրի ստորագրումը՝ մատնանշելով իրենց հանրապետությունների միջև ստեղծված տնտեսական, քաղաքական, ռազմական կապերը և արդեն ուրվագծվող Անդրֆեդերացիան: Մոսկվայի պայմանագրով՝ Անդրկովկասի հանրապետությունների հետ ընդհանուր պայմանագրի կնքում չէր նախատեսվում: Իսկ առանձին պայմանագրերի կնքման դեպքում Թուրքիայի համար դյուրին կլիներ իր կամքի պարտադրումը հանրապետություններին:

Ընդհանուր պայմանագրի կնքումը հատկապես կարևոր էր ՀԽՍՀ-ի համար, որի նկատմամբ Թուրքիան շարունակում էր թշնամական քաղաքականությունը: Ստանալով խորհրդային պատվիրակների մերժումը՝ թուրքական պատվիրակությունն ստիպված էր հրաժարվել անջատ պայմանագրերի գաղափարից և համաձայնել ընդհանուր պայմանագրին: Թուրքիայի և Անդրկովկասի հանրապետությունների միջև սահմանների ճշտման համար (նախատեսված էր Մոսկվայի պայմանագրով) ստեղծվեց հատուկ հանձնաժողով (թուրք-հայկական և թուրք-վրացական մասնախմբերով): Հայաստանից հանձնաժողովում ընդգրկվեց խորհրդական Վլադիմիր Տամրուչին: Թուրքական պատվիրակությունը, կառչելով մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրից, պահանջում էր սահմանային ոչ մի փոփոխություն չկատարել. մերժեց խորհրդային պատվիրակության պահանջը՝ Հայաստանին վերադարձնել Անիի ավերակները, Կողբի աղահանքերը, որոնք մշակութային և տնտեսական կարևոր նշանակություն ունեին Խորհրդային Հայաստանի համար:

Սահմանային միակ հարցը, որի լուծմանը չմիջամտեց թուրքական կողմը, Խորհրդային Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի ճշտումն էր: Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները կանխեցին թուրքական միջամտությունը՝ հայտարարելով, որ իրենք արդեն ճշտել են սահմանները: Տնտեսական հարցերի քննարկման ժամանակ խորհրդային կողմը Թուրքիայից պահանջեց վերադարձնել Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) գրավման ժամանակ կողոպտված քաղաքի դեպոյի գույքը: Թուրքերը հրաժարվեցին բավարարել այդ պահանջը: Վեճը շարունակվեց մինչև հոկտեմբերի 10-ի նիստը, որտեղ թուրքերը, փոխզիջման եկան խորհրդային կողմի հետ Բաթումի նավահանգստից օգտվելու հարցում և հասան այն բանին, որ Ալեքսանդրապոլի դեպոյի հարցը օրակարգից հանվեց:

Կարսի պայմանագիրը բաղկացած է ներածությունից, 20 հոդվածից և 3 հավելվածից: 1-ին հոդվածով ուժը կորցրած էին համարվում բոլոր այն պայմանագրերը, որոնք կնքվել էին պայմանավորվող կողմերի տարածքներում անցյալում ինքնիշխան կառավարությունների միջև. դրանով չեղյալ էր համարվում նաև Ալեքսանդրապոլի պայմանագիրը (1920 թ-ի դեկտեմբերի 2–3): Չեղյալ էին համարվում (բացառությամբ Մոսկվայի ռուս-թուրքականի) այն պայմանագրերը, որոնք կնքվել էին երրորդ պետության հետ և վերաբերում էին Անդրկովկասի հանրապետություններին: 2-րդ հոդվածով, որն առանձնապես կարևոր էր Թուրքիայի համար, կողմերը չէին ճանաչում «բռնի ուժով» պարտադրված ոչ մի պայմանագիր կամ միջազգային այլ ակտ. դա նշանակում էր, որ Խորհրդային Հայաստանը չի ճանաչում 1920 թ-ի օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագիրը: Թուրքիայի և Անդրկովկասի հանրապետությունների միջև սահմանը որոշվում էր 4-րդ հոդվածով (ներկայիս սահմանը Թուրքիայի հետ): 5-րդ հոդվածով Թուրքիայի, Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ների կառավարությունները համաձայնում էին Նախիջևանի մարզը՝ որպես ինքնավար տարածք, հանձնել Ադրբեջանի խնամակալությանը: 6–9-րդ հոդվածները վերաբերում էին Թուրքիայի և Վրաստանի փոխհարաբերություններին, համաձայն որոնց՝ Թուրքիան Բաթում քաղաքի ու մարզի նկատմամբ ինքնիշխանության իրավունքը զիջում էր Վրաստանին՝ պայմանով, որ տեղական բնակչությունն օգտվի լայն ինքնավարությունից, իսկ Թուրքիային իրավունք վերապահվի օգտվելու Բաթումի նավահանգստից՝ առանց դրա համար հատուկ հարկ

վճարելու (հոդված 6): 10-րդ հոդվածով կողմերը պարտավորվում էին թույլ չտալ իրենց տարածքներում այնպիսի կազմակերպությունների կամ խմբերի գոյությունը, որոնք պայմանավորվող մյուս կողմի դեմ պայքարի նկատակ ունեն: Վերջին՝ 20-րդ հոդվածով նախատեսված էր, որ պայմանագիրը ենթակա է վավերացման, և վավերագրերը կփոխանակվեն Երևանում՝ 1922 թ-ի սեպտեմբերի 11-ին: Մնացած հոդվածներով որոշվում էին կողմերի քաղաքացիների իրավական կացությունը միմյանց տարածքներում, զիջվող տարածքների բնակչության տեղափոխման իրավունքը, սահմանվում էին ռազմագերիների ու գաղթականների փոխանակման կարգը, առևտրական հարաբերություններ հաստատելու և այլ հարցեր:

Կարսի պայմանագրով վերահաստատվեցին 1921 թ-ի Մոսկվայի պայմանագրի զավթողական դրույթները, որոնք կոպտորեն ոտնահարում էին Հայաստանի կենսական շահերը:

Պայմանագիրն ստորագրել են անդրկովկասյան 3 հանրապետությունների պատվիրակության անդամները և ՌԽՖՍՀ ներկայացուցիչը:

# ԵԶՐԱՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ

- Մոսկվայի պայմանագրով Նախիջևանի հանձնումը Ադրբեջանին Հայաստանի համար շոշափելի կորուստ լինելուց բացի, վնասակար էր նաև ռազմավարական տեսակետից: Դրանով փաստորեն Հայաստանի թիկունքում՝ Արաքսի ձախ ափին, ստեղծվում էր թշնամական մի հենակետ, որը կապող օղակ էր դառնում Թուրքիայի և Ադրբեջանի միջև և պոտենցյալ սպառնալիք ստեղծում Զանգեզուրի և Արցախի համար:
- Մոսկվայի պայմանագիրը քեմալական Թուրքիայի մեծագույն դիվանագիտական հաղթանակն էր: Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության էջերում հազիվ թե գտնվի նախադեպը, երբ պարտված ու ջախջախված երկրում նոր կազմավորված և իր գոյության համար օրհասական կռիվներ մղող մի կառավարություն իր կամքը թելադրի այն պետությանը, որից օգնություն և աջակցություն էր ակնկալում:
- Կատարելով դաս կարողացանք մշակել ուսուցման մեթոդական առավել արդյունավետ հիմք, որի ընթացքում կատարեցինք համագործակցային ուսուցման մեթոդներից:
- Այսպիսով ուսուցման մեր առաջարկած մեթոդները արդյունավետ էին աշակերտների մոտիվացման և ուսումնական գործընթացին ներգրավելու համար: Աշակերտների 90% հետաքրքրությամբ մասնակցեցին դասապրոցեսին և հետաքրքրությամբ սովորեցին այն: Ակտիվ մասնակցեցին դասի քննարկմանը և առաջարկեցին հետաքրքիր լուծումներ: Առաջարկում ենք ուսմունական մեթոդների հետևյալ ռազմավարությունը, որը կօգնի աշակերտների ավել լավ ուսուցմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Արա Պապյան - Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Ասողիկ, Երևան, 2012, էջ 72-78:
2. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Պ. ՉՈԲԱՆՅԱՆ, Ա. ՍԻՄՈՆՅԱՆ, Ա. ՆԱԶԱՐՅԱՆ, Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, «Հայոց պատմություն»,Զանգակ Երևան 2021թ., 11-րդ դասարանի դասագիրք:
3. ԱՄՆ Սենատի թիվ 245 բանաձևը (3 հունիսի, 1924 թ.) միանշանակորեն ամրագրել է, որ Թուրքիան և Ռուսաստանը միասնաբար են գործել Հայաստանի կործանման ուղղությամբ: (Turkey joined with Soviet Russia in the destruction of the Armenian State, brutally murdered hundreds of thousands of Armenians ... Senate Resolution, 245, June 3, 1924. The Armenian Review, vol. 30, No. 3-119, 1977, p. 286):
4. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 527:

## Թեմայի դասավանդման մեթոդիկան

Մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը:

Հասարակական բոլոր փոփոխությունները ազդում են նաև կրթական համակարգի վրա: Հետանկախացման տարիներին ՀՀ հանրակրթության մեջ իրականացվում են կրթական բարեփոխումներ, որոնք անդրադառնում են կրթության կազմակերպման տարբեր հարցերի: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետության ուղիների մատնանշմանը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության ձևավորմանն ու զարգացմանը:

Դասի ընթացքում օգտագործ էլ եմ մտագրոհ, խճանկար, մեթոդները: Խճանկար մեթոդով աշակերտները հետևյալ հերթականությամբ.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Աշակերտները բաժանվեցին 5 խմբի: Առաջին խումբը Մոսկվայի և Կարսի մասին նյութերի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում կատարվեց:

Երկրորդ խումբը փորձագիտական խումբն էր, որը նյութերը հավաքելով, համախմբելով ապահովեց փորձարարական մասը:

Երրորդ խումբը զբաղվում էր ուսումնական աշխատանքներով:

Չորրորդ խումբը աբողջ աշխատանքը բերեց ավարտուն տեսքի:

Հինգերորդ խումբը ամփոփեց ամբողջ աշխատանքը:

Իսկ դասի ավարտին կատարեցինք համեմատում Վենի դիագրամով: Մոսկվայի և Կարսի պայմանագրերն էր, մյուս կողմում Լեռնային Ղարաբաղի հանձնումը Ադրբեջանին:

Եվ իհարկե վերջում կատարեցինք գնահատում:

Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ: